

2-46

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՐԻՔՉԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԱԳԲԱՏԻ

ՀԱՅԵԶ ԱՆ ԱՍԱԴԸ ԵՎ ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԻՐԻԱՅՈՒՄ  
(1970 - ԱԿԱՆ ԹԹ.)


Է.00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ  
պատմական գիտությունների ֆեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Բ

*Ջ. Տարգոն Նիկոլայի հովհաննեսիցով  
խորթ երեխան ցերեպոյան Ք  
Մանուկյան Տարազիցով*

ԵՐԵՎԱՆ - 2004



Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝ Վ. Ա. Դիլոյան

պատմական գիտությունների թեկնածու՝  
Ռ. Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի պատմության  
ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն


Պաշտպանությունը կայանալու է 2004թ. սեպտեմբերի 9-ին ժամը 13<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող 006  
մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղդասյան պող.,  
24գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2004թ. հուլիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝



Պ. Ա. Չորանյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիրիայի Արաբական Հանրապետության պատմության նորագույն շրջանի  
կարևորագույն իրադարձություններից մեկի՝ 1970թ. նոյեմբերի 16-ին հռչակված ուղղիչ  
շարժման էության, սկզբնավորման դրդապատճառների, նպատակների,  
գաղափարախոսության, Հաֆեզ ալ-Ասադի քաղաքական ուղեգծի, հայացքների, ինչպես նաև  
շարժման արձանագրած քաղաքական ու սոցիալ-տնտեսական ձեռքբերումների  
ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական ու գործնական  
նշանակություն:

Ուղղիչ շարժումն ըստ էության վերադարձն էր Արաբական Վերածննդի  
սոցիալիստական կուսակցության (ԱՎՄԿ կամ Բասս) սկզբնական  
գաղափարախոսությանը, նրա հիմնական սկզբունքներին՝ ներքաղաքական, սոցիալ-  
տնտեսական և արտաքին քաղաքական ոլորտներում, որոնցից փաստորեն շեղվել էր Բասսի  
ձախ թևն իր կառավարման տարիներին՝ 1966-1970թթ.:

Արաբական ոչ մի երկրում, թերևս, անկախության նվաճումից հետո ներքաղաքական  
կյանքն այնքան բուռն ընթացք չէր ունեցել, ինչպես Սիրիայում: Ուշագրավ է այն  
հանգամանքը, որ Սիրիայում հազվադեպ էր պատահում, որ կառավարությունն  
իրականացներ իր գործառույթները մեկ տարուց ավելի: Հաճախակի պետական  
հեղաշրջումները երկրում<sup>1</sup> չէին կարող չկասեցնել Սիրիայի սոցիալ-տնտեսական և  
պետական կառավարման համակարգի բնականոն զարգացումը: Այդ հեղաշրջումների  
անմիջական հիմք և նախապատճառ էին հանդիսանում խորը սոցիալական և քաղաքական  
հակասությունները սիրիական հասարակությունում: Անկախությունից ի վեր Սիրիայում  
իշխանության ղեկի մոտ իրենց փորձեցին երկրի գրեթե բոլոր քաղաքական  
կուսակցությունների, բանակային տարբեր խմբավորումների ներկայացուցիչները: Սիրիան  
հոգնել էր տարիներ ձգվող անկայունությունից և զարգացման ճիշտ ու հեռանկարային ուղի  
գտնելու փնտրությունից:

1970թ. նոյեմբերի ուղղիչ շարժումը Սիրիայի նորագույն պատմության մեջ համարվում  
է ամենախոշոր իրադարձությունն անկախության ձեռքբերումից հետո: Ուղղիչ շարժման  
համատեքստում երկրում իրականացվեցին մի շարք բարեփոխումներ և արմատական  
փոփոխություններ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտներում:  
Սիրիան արժանի տեղ գրավեց տարածաշրջանային և միջազգային քաղաքականության

<sup>1</sup> Միայն 1949թ. օրինակ տեղի ունեցավ երեք հեղաշրջում, իսկ, ընդհանուր առմամբ, անկախությունից մինչև  
1970թ. Սիրիայում կատարվել է մոտ երկու տասնյակ հեղաշրջում կամ հեղաշրջման փորձ:

ասպարեզում, նրա տեսակետը սկսեց կարևորվել մերձավորարևելյան տարածաշրջանում գոյություն ունեցող խնդիրների լուծման ժամանակ:

Ուղղիչ շարժման ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում բացահայտել հետազոտվող ժամանակահատվածում Սիրիայի ներքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների առանձնահատկությունները, ճիշտ հասկանալ և գնահատել տարբեր երևույթների ու իրադարձությունների խորքային պատճառները:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Սիրիան Մերձավոր Արևելքում Հայաստանի բարեկամ պետություններից ու կարևորագույն գործընկերներից մեկն է, որի հետ մեր երկիրն ունի ջերմ ու բարիդրացիական քաղաքական, ինչպես նաև ակտիվ զարգացող մշակութային, գիտակրթական ու տնտեսական հարաբերություններ:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է ուղղիչ շարժման կարևորագույն փուլի՝ 1970-ական թթ. Սիրիայի պետական կառավարման համակարգի, սոցիալ-տնտեսական վերափոխումների ու ներքաղաքական զարգացումների բնութագրումից և դրանց առանձնահատկությունների հետազոտումից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Սիրիայի ներքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը երկրում 1963թ. Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության իշխանության գալուց հետո մինչև ուղղիչ շարժումը՝ 1970թ., և վեր հանել շարժման առաջացման հիմնական և գլխավոր դրոպայատճառները՝ ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, կուսակցական-գաղափարախոսական, ինչպես նաև արտաքին քաղաքական շարժառիթները:
- Ներկայացնել ուղղիչ շարժման հիմնադիր Հաֆեզ ալ-Ասադի հայացքներն ու քաղաքական ուղեգիծը, 1970թ. կատարված իշխանափոխության գործընթացը, ինչպես նաև սիրիական պետության նոր քաղաքականության հռչակումը:
- Լուսաբանել Հաֆեզ ալ-Ասադի օրոք երկրում իրականացված պետական կառավարման համակարգի բարեփոխումները և պետական ինստիտուտների կազմավորումը՝ պետության նախագահի ինստիտուտի կայացումը, Ազգային առաջադիմական ճակատի ստեղծումը, Ժողովրդական ժողովի ձևավորումն ու պետության նոր մշտական սահմանադրության ընդունումը:
- Ներկայացնել 1973թ. հոկտեմբերյան ազատագրական պատերազմը, որի հետևանքով ազատագրվեցին սիրիական որոշ տարածքներ և անդրադառնալ Ասադի ճկուն արտաքին քաղաքականության շնորհիվ արաբական համերաշխության դրսևորմանը:

- Ուղղիչ շարժման էության բացահայտման և հիմնարար սկզբունքների վերլուծության հիման վրա փորձել անաչառ կերպով լուսաբանել Սիրիայի ներքաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումները, հետազոտել շարժման քաղաքականության հետևանքով իրականացված ձեռքբերումներն ու բացթողումները:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Սիրիայի 1970-ական թթ. պատմությանը, նրա առանձին խնդիրներին, ներքաղաքական, արտաքին քաղաքական ու սոցիալ-տնտեսական որոշ զարգացումներին անդրադարձել են ինչպես հայ և խորհրդային, այնպես էլ արևմտյան, արաբական, հրեական հեղինակները, սակայն դրանք չեն կրել ամբողջական բնույթ, և որպես այդպիսին չեն ներկայացվել առանձին աշխատանքով: Որպես կանոն, հետազոտվող ժամանակաշրջանի ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում, Սիրիայում ազգային-ազատագրական պայքարի, Սիրիայի արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի, արաբախրայեյան հակամարտության, «մուսուլման-եղբայրների» գործունեության, ինչպես նաև մերձավորարևելյան տարածաշրջանի ընդհանուր հիմնախնդիրների լույսի ներքո:

Ներկա ուսումնասիրությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվում վերլուծել ուղղիչ շարժման պատճառները, սկզբնավորման նախադրյալները, Մերձավոր Արևելքի կարկառուն պետական-քաղաքական գործիչ Հաֆեզ ալ-Ասադի հայացքներն ու քաղաքական ուղեգիծը, Բաաս կուսակցության դերը սիրիական հասարակության զարգացման և առաջընթացի գործում: Այդուհանդերձ հեղինակն իր առջև խնդիր չի դրել ուսումնասիրվող պատմական ժամանակահատվածում հետազոտել Սիրիայի ներքաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումներին վերաբերող բոլոր խնդիրները, ինչը մեր կարծիքով, մեկ աշխատանքի խնդիր չի կարող դառնալ, այլ փորձ է արվել առավելապես կանգ առնել դրանց բնույթի, ուղղվածության և առանձնահատկությունների վրա:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1970-ական թվականները՝ ուղղիչ շարժման առաջին և կարևորագույն փուլը: Եթե աշխատանքի ժամանակագրական սահմանների սկիզբը բացատրության կարիք չի զգում, և 1970թ.-ը ուղղիչ շարժման սկզբնավորման տարեթիվն է, ապա սահմանափակումը մեկ տասնամյակով հիմնավորվում է նրանով, որ 1970-ական թթ. վերջերից Սիրիայում «մուսուլման-եղբայրներ» ծայրահեղական կազմակերպության կողմից ծավալված հակապետական ահաբեկչական գործողությունների և վարչակարգի տապալման փորձերի հետ կապված երկրում ստեղծվեց

ներքաղաքական լարվածություն, որի հետևանքով որոշ չափով դանդաղեց սոցիալ-տնտեսական բարեփոխումների գործընթացը: Դրանով ավարտվեց ուղղիչ շարժման առաջին փուլը:

#### 5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են ուղղիչ շարժման սկզբնավորման դրդապատճառների, նրա հռչակած քաղաքականության հիմնական ուղղությունների, իրադարձությունների, հարցադրումների և կարծիքների քննական մեկնությունը և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

#### 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ արծարծվող խնդիրները, փաստերն ու տվյալները կարող են օգտագործվել Սիրիայի նորագույն շրջանի պատմությամբ հետաքրքրվող հետազոտողների կողմից, ինչպես նաև Սիրիայի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի քաղաքական գործընթացներին, տվյալ ժամանակաշրջանի քաղաքականության պատմության հիմնախնդիրներին նվիրված դասընթացներում կամ ուսումնասիրություններում: Ուղղիչ շարժման լույսի ներքո տեղի ունեցած Սիրիայի կարևորագույն իրադարձությունների, ներքաղաքական պայքարի, սոցիալ-տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունների և գործընթացի լուսաբանումը կարող է օգտակար լինել պետական հաստատությունների համար տարբեր տեղեկատվական և վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Սիրիայի Արաբական Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշ մտտեցումներ մշակելու տեսանկյունից:

#### 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության, նրա հիմնական դրույթներն ու արծարծվող խնդիրները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և թեզերում, ինչպես նաև Երիտասարդ արևելագետների հանրապետական XXII, XXIII, XXIV և XXV գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի կողմից հրատարակված հոդվածների և թեզերի ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

#### 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՈՒՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը գրվել է հայերեն, ռուսերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով սկզբնաղբյուրների և հետազոտությունների հիման վրա: Հեղինակն աշխատել է Հայաստանի Ազգային, ՀՀ ԳԱԱ Հիմնական և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում,

իսկ 2002թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արևելագիտության ինստիտուտի կողմից գործուղվել է Սիրիայի Արաբական Հանրապետություն՝ Դամասկոս, որտեղ աշխատել է Դամասկոսի Ասադի գրադարանում, ինչպես նաև Դամասկոսի արաբագիտական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի գրադարանում: Ուսումնասիրության համար օգտակար են եղել հայ, խորհրդային, ինչպես նաև ամերիկյան, արևմտաեվրոպական, հրեա և արաբ հետազոտողների՝ քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայի պատմությանը, մերձավորարևելյան տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներին, ինչպես նաև արաբ-խորհրդային հակամարտությանը նվիրված մասնագիտական արժեքավոր աշխատությունները, հոդվածները, հուշերն ու քաղաքական գործիչների ելույթներն ու տեսակետները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել ուղղիչ շարժման քաղաքականությանը, նրա առանձնահատկություններին և ձեռքբերումներին նվիրված արաբալեզու պաշտոնական փաստաթղթերն ու նյութերը<sup>2</sup>, Բասա կուսակցության համագումարների որոշումները, երկրի մշտական սահմանադրությունը, Ազգային առաջադիմական ճակատի խարտիան, կանոնադրությունը, որոշումները, ինչպես նաև Ասադի ելույթները, հրապարակային հայտարարությունները<sup>3</sup>: Կարևոր աղբյուր են ծառայել նաև արաբական տարբեր պարբերականները, հիմնականում Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի և արաբական մյուս երկրների մամուլը, որոնցից կարելի է նշել «Ալ-Բասա», «Թիշրին», «աս-Մաուրա», «Ալ-Միրամ», «ան-Նահար», «ան-Նահար ալ-արաբի վա ադ-դուալի», «Ալ-Անուար», «Ալ-Հայաթ», «Նիդալ աշ-շաար», «Ալ-Ախբար» և այլն<sup>4</sup>:

Թեև հետազոտվող ժամանակահատվածում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով Սիրիայում գոյություն ունեցող գրաքննություն և ուսումնասիրող թեմայի

<sup>2</sup> نضال حزب البعث العربي الاشتراكي ١٩٤٣-١٩٧٥: دراسة تاريخية تحليلية موجزة دمشق، ١٩٨٣. حزب البعث العربي الاشتراكي. القيادة القومية. مكتب الشفاعة والاعداد الحزبي. المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري، الحركة التصحيحية المجيدة في الذكرى الخامسة والعشرين، دمشق، ١٩٩٥. الأحزاب السياسية في سوريا. بيروت، ١٩٥٤.

<sup>3</sup> يوسف مريش، الجبهة الوطنية التقدمية والتعددية السياسية في القطر العربي السوري، دمشق، ١٩٩٣. فضل عفاش، المجالس الشعبية والنيابية في الوطن العربي. مجلس الشعب في السوربة ١٩٢٨-١٩٨٨، دمشق، ١٩٨٨. مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد. الكتاب الاول. ١٩٧٠/٢/٢٤-١٩٧١/٨/٣٠، البيعة الشعبية الاجتماعية للرئيس الامين العام للحزب القائد حافظ الأسد. وثائق وحقائق، خطب وكلمات وتصريحات السيد الرئيس القائد حافظ الأسد. دمشق، ١٩٨٤. مجموعة الخطب للرئيس والامين العام لحزب البعث العربي الاشتراكي حافظ الأسد. الكتاب الاول، دمشق، ١٩٩٤.

دستور الجمهورية العربية السورية الصادر بالمرسوم رقم ٢٠٨ تاريخ ١٣-٣-١٩٧٣. البعث، دمشق، تيشرين، دمشق، ألتورة، دمشق، ألتحار، بيروت، ألتحار، العربي والدولي، باريس، نضال الشعب، دمشق، ألتحار، بيروت، ألتوار، بيروت، ألتخبار، ألتاهرة.

վերաբերյալ սիրիական գրականությունը առանձնապես աչքի չի ընկնում անհրաժեշտ գիտական կարևորությամբ, օբյեկտիվությամբ և փաստագրական հարուստ նյութով, այդուհանդերձ, հեղինակը փորձել է հնարավորինս օգտագործել սիրիական պաշտոնական տեղեկատու գրականության նյութերն ու փաստաթղթերը և սիրիական հեղինակների աշխատությունները:

Սիրիացի հեղինակներից ուսումնասիրությանը նպաստել են Ռ-իյադ Աուդ Սուլեյմանի, Խալիլ Հանիի, Հիշամ Մութավալիի, Հաննա ալ-Խուրիի, Սաֆվան Կուդսիի, Ահմադ Կառնայի, Իսրահիլ Լուկայի և այլոց աշխատությունները<sup>5</sup>:

Հարկ է նշել նաև սիրիացի հեղինակների ռուսերեն լեզվով հրատարակված ուսումնասիրությունները, որոնցից կարելի է առանձնացնել Մուհամմադ ալ-Հարիրիի, Սակր Այուբիի, Հուլա Աբու Տարիիի հետազոտությունները<sup>6</sup>:

Ատենախոսության համար չափազանց օգտակար են եղել խորհրդային և հայ արևելագետների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր Արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային քաղաքական և տնտեսական կիմնահարցերին, ինչպես նաև արաբա-խորայելյան հակամարտությանը նվիրված մեծագրություններն ու հոդվածները, որոնցից անհրաժեշտ է նշել Է. Փիր-Բուդադայի, Վ. Վավիլովի, Վ. Վիկտորովի, Ե. Գմիրսիեվի, Ե. Պրիմակովի, Գ. Միրսկիի, Ս. Բվանովի, Վ. Ախմետովի, Ա. Ֆիլոնիկի, Գ. Գուչետլի, հայ արաբագետներից Ն. Հովհաննիսյանի, Ը. Կարամանուկյանի, Հ. Գրիգորյանի, Պ. Մարաջյանի, Ռ. Կարապետյանի ուսումնասիրությունները<sup>7</sup>:

<sup>5</sup> رياض سليمان عواد، حافظ الأسد وتجربة الجبهة الوطنية التقدمية في سورية، دمشق، ١٩٩٢، رياض سليمان عواد، هاني شحادة الخوري، القائد المفكر حافظ الأسد والمشروع التنموي الحضاري، دمشق، ٢٠٠٠، صفوان قدسي، ألبطل والتاريخ. قراءة في فكر الرئيس حافظ الأسد السياسي. الطبعة الأولى، دمشق، ١٩٨٤. هاني خليل، حافظ الأسد. الايديولوجية الثورية والفكر السياسي. الطبعة الثانية، دمشق، ١٩٨٧. هشام متولي، أبحاث في الإقتصاد السوري والعرابي دمشق ١٩٧٤. إسكندر لوقا، جولة في فكر القائد حافظ الأسد. قيم فكرية إنسانية، دمشق، ١٩٨٧. احمد قرنة، حافظ الأسد. صانع تاريخ الأمة وباني مجد الوطن، المجلدات الخمسة. حلب-بيروت.

<sup>6</sup> Аль -Харири Мухаммад, Налоговое законодательство и практика уклонения от налогов в Египте и Сирии, в сб. Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории). Москва, 1998. Айюби Сакр, Структура и основные направления внешних экономических связей Сирии (70 -е - начало 90 -х годов), в сб. Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории). Москва, 1998. Худа Абу-Табих, Особенности социально -экономического развития Сирии в период подготовки реформ, Арабский сборник: выпуск второй, Москва, 2000. его же Исправительное движение и опыт либерализации сирийской экономики, Арабский сборник: выпуск второй, Москва, 2000.

<sup>7</sup> Пир -Будагова Э. П., Сирия в борьбе за упреждение национальной независимости (1945 -1966), М., 1978. Пир -Будагова Э. П., Гасанов Т. Б., Ислам в идеологии Партии арабского социалистического возрождения, Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, сборник статей, Москва, 1986. Пир -Будагова Э. П., Концепция "Арабского социализма" в идеологии Партии Арабского Социалистического Возрождения Сирии (ПАСВ), в кн. Проблемы современной советской арабистики I: современные политические и социально -

Արևմտյան և հրեա հետազոտողներից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել Պ. Սիլի, Ջ. Դեվիլին, Մ. Քերրի, Ն. Վան-Դամի, Վ. Քվանդտի, Յու. Շուքիրիի, Մ. Մաոզի, Ֆ. Աջամիի հետազոտությունները<sup>8</sup>:

Աշխատանքի համար ոչ երկրորդական նշանակություն են ունեցել նաև խորհրդային, ամերիկյան և արևմտաեվրոպական մամուլում Սիրիայի վերաբերյալ տեղ գտած հրապարակումներն ու հոդվածները, ինչպես նաև նախագահ Ասադի հետ կայացած հարցազրույցները, որոնցից կարելի է առանձնացնել «Պրավդա», «Բավետիա», «Մեծդոմարոդնայա ժիզն», «Ազիյա ի Աֆրիկա սեվիդնյա», «Միովայա էկոնոմիկա ի մեծդոմարոդնիյե օտնոչնիյա», «Միլլ Իստ ջորնալ», «Ֆորին ըֆեյրա», «Ջորնալ օֆ

экономические проблемы Арабских стран, Ереван, 1988. Пир -Будагова Э., Итоги внутри и внешнеполитического развития Сирии к концу 80 -х гг., Специальный Бюллетень No 2 (273), Москва, 1991. Фир-Буцадгов Э., Фацарական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ IX, Արաբական երկրներ, Երևան, 1978. Вавилов В. В., Социально -экономическое преобразования в Сирии (1946 -1970 гг.), Москва, 1972. Викторов В. П., Экономика современной Сирии. (проблемы и перспективы), Москва, 1968. Дмитриев Е. Палестинский узел: к вопросу об урегулировании палестинской проблемы. М., 1978, Примаков Е. История одного сговора: ближневосточная политика США в 70 -е начале 80 -х годов. Москва. 1985, его же, Анатолия ближневосточного конфликта. М., 1978, Мирский Г. Армия и политика в странах Азии и Африки. М., 1970. его же, Третий мир. Общество, власть, армия. М., 1976. его же, Роль армии в политической жизни стран "третьего мира". М., 1989. Иванов С. А., Межарабская политика Сирии, Том 1, Москва, 1986. Ахмедов В. Современная Сирия: промышленность, рабочий класс, профсоюзы. Москва. 1991, его же, Армия и политика в современной Сирии, Армия и власть на Ближнем Востоке. Сборник статей. Москва, 2003. Филоник А. Аграрные проблемы современной Сирии. М., 1981. его же, Некоторые итоги эволюции социальной структуры Сирии, Специальный Бюллетень No 2 (273), Москва, 1991. его же, Госсектор и бюрократия в Сирии, Арабские страны. Проблемы социально -экономического и общественно - политического развития. Сборник статей, выпуск второй, Москва, 1995. Гучетль Г. И., Демократизация в Арабском мире: опыт Туниса и Сирии. Москва, 1999. Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975: Հովհաննիսյան Ն., Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982. Оганесян Н. Отношения Иракской Республики со странами Арабского Востока. Ереван. 1985. Կարամանուկյան Ը., Արաբական պետությունների լիզայի դերը արաբական երկրների հակամիջերիխտակալ պայքարում, Երևան, 1988. Григорян Г. Позиция Сирии в Ближневосточном конфликте. Ереван. 1989. его же, Позиция левобаасистского руководства САР в ближневосточном кризисе (1967 -1970 гг.). Ереван. 1984. Սարգսյան Պ., 1973թ. արաբա-խորայելյան պատերազմը և արաբական առաջադիմական ուժերի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, IX հատոր, Արաբական երկրներ, Երևան, 1978. նույնի, Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխությունների համար, Երևան, 1986. его же, Активизация деятельности организации "Братья -мусульмане в Сирии в 1979-1982 гг., в сб. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. Ереван. 1986. Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000.

<sup>8</sup> Seale Patrick. Assad and the struggle for the Middle East. London. 1988. , Devlin F. John. Syria: Modern State in an Ancient land. Boulder, Colorado, 1983., Kerr Malkolm. Hafiz al-Asad and the Changing Patterns of Syrian Politics, International journal. 28 (4) 1975., Van Dam Nicolaos, The Struggle for Power in Syria. Politics and Society under Assad and the Ba'th Party. I. B. Tauris Publishers. London - New York. 1996., Quandt W., Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley, 1977., Choucri Youssef. State and Society in Syria and Lebanon. St. Martine's Press. New York. 1994., Ma'oz Moshe. Asad, The Sphinx of Damascus: A Political Biography. Weidenfeld and Nicolson, London, 1988., Ma'oz Moshe. The Emergence of Modern Syria, Syria under Assad: Domestic Constraints and Regional Risks. Edited by Moshe Ma'oz and Avner Yaniv. Croom Helm, London and Sydney, 1987., Ajami Fouad, Geopolitical Illusions, The Middle East and the Western Alliance, Edited by Steven L. Spiegel, London, George Allen and Unwin, 1982.

վալեսրայն սրադիս», «Միդլ Իստ ենդ Նորթ Աֆրիկա», «Նյու Յորք Թայմս», «Վաշինգտոն փոստ», «Ֆայնենշլ Թայմս», «Թայմս», «Նյուսփիկ» պարբերականները<sup>9</sup>:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից, վերջաբանից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ նշվում է ուսումնասիրության թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, աշխատության մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, ինչպես նաև ներկայացվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

ԱՄԱԶԻՆ ԳԼԽՈՒՄ՝ «ՈՒՂԻՉ ՇԱՐԺՄԱՆ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ, ԷՌԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ», համառոտ ներկայացվում է Սիրիայի սոցիալ-տնտեսական և ներքաղաքական իրադրությունը 1963-1970թթ., այսինքն՝ մինչև ուղիչ շարժումը, քննարկվում են ուղիչ շարժման սկզբնավորման նախադրյալները, պատճառները, որոնցից հեղինակի կողմից առանձնացվել են սոցիալ-տնտեսական, կուսակցական-գաղափարախոսական ու արտաքին քաղաքական պատճառները: Ներկայացվում են Հաֆեզ ալ-Ասադի հայացքները, երկրում տեղի ունեցած իշխանափոխությունը, ուղիչ շարժման սկզբնավորումը, նրա հիմնական ծրագրային դրույթներն ու քաղաքականությունը:

Գլխի առաջին ենթաբաժնում լուսաբանվում է Սիրիայի ներքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումները մինչև ուղիչ շարժման սկզբնավորումը, 1963թ. մարտի 8-ի Բասսի հեղափոխությունը, իշխանության նոր մարմինների ստեղծումը, ներքաղաքական միջոցառումները իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ, Բասս կուսակցության պատակտումը աջ և ձախ թևերի, ներկուսակցական պայքարը, 1966թ. փետրվարի 23-ի հեղաշրջումը և ձախբասականների իշխանության անցնելը, ինչպես նաև 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմը և նրա հետևանքները Սիրիայի համար:

Երկրորդ ենթաբաժնի ա/ մասում հետազոտվում և վերլուծվում են ուղիչ շարժման սոցիալ-տնտեսական պատճառները՝ ձախբասականների քաղաքականությունը սոցիալ-տնտեսական ոլորտում, ձախ ուժերի շեղումը Բասս կուսակցության սկզբնական ծրագրերից, համատարած վերահսկման և ազգայնացման քաղաքականությունը, հողի և

<sup>9</sup> «Правда», «Известия», «Международная жизнь», «Азия и Африка сегодня», «Мировая экономика и международные отношения», «Middle East Journal», «Foreign Affairs», «International Journal» «The Journal of Palestine Studies», «The Middle East and North Africa», «The New York Times», «The Washington Post», «Financial Times», «The Times», «Newsweek».

ունեցվածքի բռնագրավման և պետականացման միջոցառումները, որի հետևանքով Սիրիան հայտնվեց ծանր դրության մեջ, հասարակության մեջ խորը սոցիալական հակասությունների առաջացումը, վարչակարգի հետապնդումները մեծահարուստների և ձեռնարկատերերի նկատմամբ, արդյունքում ունևոր խավի արտահոսքը երկրից: Ձախբասականները ցանկանում էին նմանատիպ տնտեսական քաղաքականությամբ օրինակ ծառայել մյուս արաբական պետությունների համար, որոնց տնտեսությունը սերտորեն կապված էր կապիտալիստական երկրների և արևմտյան ընկերությունների հետ: Բասսի ձախ թևի քաղաքականության հետևանքով Սիրիայում տեղի ունեցան բողոքի և դժգոհության ելույթներ վարչակարգի դեմ իսլամական շրջանակների կողմից, որոնք ազգայնացման և բռնագրավման քաղաքականությունը դիտարկում էին որպես ոտնձգություն իսլամի, նրա սկզբունքների և գաղափարախոսության դեմ: Բասսի ձախ թևի քաղաքականության արդյունքում կուսակցությունում առաջացել էին երկու ընդդիմադիր խմբավորումներ՝ այսպես կոչված քաղաքացիական խմբակցությունը Բասսի սիրիական երկրամասային ղեկավարության գլխավոր քարտուղար Մալահ Ջադիդի ղեկավարությամբ, և զինվորական խմբավորումը, որի առաջնորդն էր Սիրիայի պաշտպանության նախարար Հաֆեզ ալ-Ասադը: Տնտեսության ոլորտում Ասադը և նրա կողմնակիցները կողմ էին որոշ չափով տնտեսության ազատականացման և մասնավոր ներդրումների խրախուսման, ինչն անընդունելի էր ձախբասականների համար:

Երկրորդ ենթաբաժնի բ/ մասում վերլուծվում են ուղիչ շարժման սկզբնավորման կուսակցական-գաղափարախոսական պատճառները: Ներկայացվում է Բասսի նպատակները համաարաբական ասպարեզում և գերիշխող քաղաքական ուժի վերածվելու նկրտումները, նրա դիրքորոշումն ու քաղաքականությունը մյուս կուսակցությունների նկատմամբ, ձախբասականների անհաշտ կեցվածքն ու պայքարը ինչպես կոմկուսի, այնպես էլ Եգիպտոսի առաջնորդ Նասերի հետևորդների՝ նասերականների և երկրի մյուս քաղաքական խմբավորումների նկատմամբ: Վերլուծվում է նաև Բասսի սկզբնական գաղափարախոսությունը իսլամի հանդեպ և դրանցից Բասսի ձախ թևի շեղումը: Հակառակ ձախբասականների, Ասադը դեմ էր արտահայտվում մման հայացքներին և հանդես էր գալիս իսլամի նկատմամբ չափավոր քաղաքականության անհրաժեշտության օգտին: Ուղիչ շարժման գաղափարախոսական պատճառների շարքում հատկապես առանձնանում են Բասսի երկու խմբավորումների տարածայնություններն ու հակասությունները մեծավորարևելյան հակամարտության, Իսրայելի դեմ պայքարի և նրա կողմից գրավված արաբական տարածքների ազատագրման միջոցների ընտրության և համապատասխան քաղաքականության որդեգրման հարցում: Բասսի ձախ թևը Իսրայելի դեմ պայքարի և արաբական հողերի ազատագրման համար որդեգրել էր ժողովրդասպառազանական պատերազմի հայեցակարգը: Հատկանշական է, որ այն ոչ միայն վերաբերում էր

Պաղեստինի և արաբական մյուս գրավված տարածքների ազատագրությանը, այլև 2-րդ փուլում նպատակ ունեք վերածվելու համաարաբական հեղափոխության մի շարք արաբական երկրներում արևմտամետ վարչակարգերից ձեռքբազաովելու նպատակով: Ի տարբերություն ձախ թևի ներկայացուցիչների, Ասադն ու նրա կողմնակիցները գտնում էին, որ ժողովրդազատագրական պատերազմն ու անկանոն զինված խմբավորումների միջոցով պայքարն Իսրայելի դեմ անարդյունավետ է: Ասադն անհրաժեշտ էր համարում նախևառաջ ստեղծել ուժեղ և մարտունակ բանակ, ձեռք բերել անհրաժեշտ սպառազինություններ, որի միջոցով էլ հնարավոր կլինի ազատագրել կորցրած տարածքները:

Երկրորդ ենթաբաժնի գ/ մասում վերլուծվում են ուղղիչ շարժման կարևորագույն գործոն հանդիսացող արտաքին քաղաքական պատճառները: Չախբասականների արտաքին քաղաքականության՝ հարևան արաբական երկրների հետ չհամագործակցելու, համաարաբական զագաթնաժողովներին և հանդիպումներին լիարժեք չմասնակցելու, ինչպես նաև արաբական պահպանողական վարչակարգերի դեմ քարոզչության ու դրանց տապալման փորձերի հետևանքով Միրիան հայտնվել էր մեկուսացման մեջ արաբական աշխարհում: Չախբասականները տարբեր պատճառաբանություններով մերժում էին նաև արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորմանն ուղղված ցանկացած ծրագիր: Միրիական ղեկավարությունը Իսրայելի ռազմատենչ կեցվածքը դիտում էր որպես արաբական աշխարհում քաղաքական-գաղափարական պայքարն ու հեղափոխական տրամադրությունները խթանող և զարգացնող ազդակ: Չախբասականները, քննադատելով արաբական միապետական վարչակարգերը, հիմնավորում էին, որ ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից Իսրայելի դեմ նրանք պարզապես չեն կարող արդյունավետ պայքարել՝ հանուն Պաղեստինի և հանուն համաարաբական շահերի: Այստեղից էլ առաջնահերթ նպատակ էր դառնում այդ վարչակարգերի տապալումը, առցիախտական գաղափարների տարածումն ու ընդհանրապես բասական հեղափոխության արտահանումը: Ի տարբերություն Բասսի ձախ թևի, Ասադը դեմ էր երկրի մեկուսացմանը արաբական աշխարհում, կոչ էր անում համագործակցել Եգիպտոսի, Իրաքի և Հորդանանի և ընդհանրապես բոլոր արաբական երկրների հետ: Նա գտնում էր, որ ձախբասականները ճիշտ չեն կողմնորոշվում տարածաշրջանում տիրող պայթյունավտանգ իրադրության մեջ, որը հանգեցնում էր բազմաթիվ սխալների արտաքին քաղաքականության մեջ:

Երրորդ ենթաբաժնում քննարկվում են իշխանափոխության անմիջական որդապատճառները՝ հարևան Հորդանանում տեղի ունեցած իրադարձությունները, Բասս կուսակցության երկրամասային 10-րդ արտահերթ համագումարը, նրա ընդունած որոշումները, որոնք հիմք հանդիսացան Ասադի կողմից երկրում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար: Այս ենթաբաժնում նկարագրվում է նաև 1970թ. իշխանափոխության գործընթացը, ուղղիչ շարժման քաղաքականության հռչակումը, Բասս

կուսակցության Միրիայի երկրամասային ժամանակավոր ղեկավարության նույնքերի 16-ի հայտարարությունն ու ծրագիրը:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԳ-ԳՆՈՒՆԸ՝ «ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՐԻԱՅՈՒՄԸ», նվիրված է Միրիայում ուղղիչ շարժման սկզբնավորումից ի վեր երկրում ձևավորված պետական կառավարման նոր համակարգին՝ համընդհանուր ժողովրդական հանրաքվեի միջոցով ընտրվող պետության նախագահի ինստիտուտի ստեղծմանը, Ազգային առաջադիմական ճակատի հիմնադրմանը, ուղղակի ընտրությունների միջոցով կազմավորվող պետության օրենսդիր մարմնի՝ Ժողովրդական ժողովի ձևավորմանը, երկրի նոր մշտական սահմանադրության ընդունմանը, ինչպես նաև նախագահ Հաֆեզ ալ-Ասադի օրոք պետության անվտանգության նոր հայեցակարգին՝ ամուր, մարտունակ և, այսպես կոչված, գաղափարական բանակի ստեղծմանն ու ազգային անվտանգության ու հատուկ ծառայությունների հզոր համակարգին: Անդրադարձ է կատարվում նաև ուղղիչ շարժման կարևոր ձեռքբերում համարվող 1973թ.-ի հոկտեմբերյան ազատագրական պատերազմին ու նրա հետևանքներին:

Առաջին ենթաբաժնի վերաբերում է երկրում վարչակազմի փոփոխությունից հետո ժամանակավոր կառավարության և ժողովրդական ժողովի ստեղծմանը, ինչպես նաև Միրիայի ժամանակակից պատմության մեջ առաջին անգամ համաժողովրդական ուղղակի զադումի հանրաքվեի միջոցով ընտրվող պետության նախագահի ինստիտուտի կայացմանը: Սկզբնական շրջանում Հաֆեզ ալ-Ասադն ու նրա հայացքները ժողովրդի լայն շրջաններին, ինչպես նաև կրոնական գործիչներին դեռևս անհայտ էին, այլ կերպ ասած՝ նա անհայտ էր որպես քաղաքական ակնամուր գործիչ: Ասադը, լինելով պաշտպանության նախարար և Բասսի սիրիական մասնաճյուղի զինվորական խմբավորման ղեկավար, հայտնի էր միայն քաղաքական ղեկավարության շրջանում ու բանակում և սկզբնական շրջանում մեծ վստահություն ու հեղինակություն էր վայելում գլխավորապես զինվորականներին շրջանում: Ահա այս իրողություններից ելնելով՝ Ասադի և նրա ալավիական շրջապատի համար առաջնահերթ խնդիր էր դարձել իշխանության օրինականացման հարցը, միայն դրանից հետո հնարավոր կլինեք անցնել երկրի պետական կառավարման համակարգի բարեփոխումների և ժողովրդավարական գործընթացների իրականացմանը: Միրիայի ղեկավարությունը ստանձնելուց հետո Ասադի առջև բացի հրատապ սոցիալ-տնտեսական խնդիրներ լուծելուց և երկիրը արտաքին քաղաքական մեկուսացումից դուրս բերելուց, կանգնած էին նաև մի շարք այլ խնդիրներ, որոնցից պետք է նշել պետության պաշտպանունակության ամրապնդման, բանակի վերազինման և բարոյական ոգու բարձրացման, պետական կառավարման համակարգի բարեփոխումների, Բասս կուսակցության դերի և հեղինակության բարձրացման, երկրի բոլոր քաղաքական ուժերի

համախմբման խնդիրը: Վերոհիշյալ խնդիրները լուծելու համար Հաֆեզ ալ-Ասադը սկսեց իշխանության օրինակահանգսման գործընթացը: 1970թ. նոյեմբերի վերջից իրադրությունը երկրում լիովին վերահսկելի դարձնելուց հետո Ասադը նախընտրական քարոզարշավ սկսեց ամբողջ երկրով մեկ՝ այցելելով Սիրիայի բոլոր մուհաֆազաները (մարզերը), մեծ ու փոքր քաղաքներ, գյուղեր, ինչպես նաև տարբեր կազմակերպություններ, արհմիություններ, գիտական, կրթական ու մշակութային հաստատություններ՝ հանդիպելով հասարակ ժողովրդի, հասարակության թուր խավերի ներկայացուցիչների հետ և նրանց ներկայացնելով իր հայացքները, ծրագրերը, ինչպես նաև իշխանափոխության իրական պատճառները, ուղղիչ շարժման պատմական անհրաժեշտությունը Սիրիայի համար, իր նվիրվածությունը Բասա կուսակցությանը, նրա գաղափարախոսությանը՝ ընդգծելով կուսակցության հսկայական դերը սիրիական հասարակության զարգացման և ներքին ու արտաքին թշնամու դեմ պայքարի գործում: Հարկ է նշել, որ Ասադը անհայտ գործիչ էր նաև արտասահմանյան պետությունների դեկավարների համար, նա չէր ցանկանում արտերկրի առաջնորդների կողմից դիտվել որպես իշխանությունը զավթած բռնապետ և այդ նպատակով իր հայացքներն ու ծրագրերը հասանելի դարձնելու համար հանդիպում էր նաև Սիրիայում հավատարմագրված արաբական և արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների և առաքելությունների դեկավարների հետ, որոնց ներկայացնում էր սիրիական ժողովրդի արդարացի և օրինական պայքարը թշնամու դեմ՝ հանուն հայրենի հողերի ազատագրման ու Պաղեստինի եղբայրական ժողովրդի ռոմանտիկապես իրավունքների վերականգնման: Այդ գործում նա շեշտում էր դիվանագետների մեծ դերը, որոնց գործունեության միջոցով է ձևավորվում միջազգային հանրության կարծիքն ու դիրքորոշումը:

1971թ. մարտի 12-ին, պաշտոնական տվյալների համաձայն, ստանալով ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների ձայների 99,9 տոկոսը՝ Հաֆեզ ալ-Ասադը յոթ տարի ժամկետով ընտրվեց Սիրիայի նախագահ: Գիշտ է, Ասադը հանդիսանում էր երկրի նախագահի պաշտոնի համար առաջադրված միակ թեկնածուն, այնուամենայնիվ հաճախակի ռազմական հեղաշրջումներ տեսած և անընդհատ ներքաղաքական անկայուն վիճակի մեջ գտնվող Սիրիայի համար տեղի ունեցած իրադարձությունը լուրջ առաջընթաց քայլ էր և ուներ քաղաքական ու հոգեբանական մեծ նշանակություն: Ասադն ու նրա շրջապատը ձեռքագատվեցին իշխանությունը Սիրիայում զավթած լիներու անխուսափելի բարոյությից:

Երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում քննարկվում է պետության անվտանգության նոր հայեցակարգը: Մինչև նախագահական հանրաքվեն, սկզբնական շրջանում, ինչպես նախորդ ձախբասական դեկավարությունը՝ ի դեմս արավի փոքրամասնությունը ներկայացնող Սալահ Ջադիդի, Այնպես էլ Ասադը, չցանկանալով սրել էթնոկոնֆեսիոնալ

հարաբերությունները երկրում, որպես պետության նախագահ նշանակում էին իրենց համախոհներից սուննի մահմեդականների, սակայն իշխանության ամբողջ լծակները կենտրոնացնելով իրենց ձեռքում: Դրանով, փաստորեն, նրանք հակասության մեջ չէին մտնում Սիրիայի նախորդ սահմանադրությունների հետ, որոնցում սկսած 1930թ.-ից նշվում էր, որ երկրի նախագահը պետք է լինի սուննի մահմեդական: Ասադը ձախբասականների դառը փորձից լավ հասկանում էր, որ ներկայացնելով երկրի էթնոկոնֆեսիոնալ փոքրամասնություններից մեկը և դառնալով պետության նախագահ, վաղ թե ուշ առաջացնելու է սուննի ազգաբնակչության և կրոնական գործիչների վրդովմունքը, բողոքն ու անհնազանդությունը, որոնք օգտագործելով թե՛ ներքաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ արտաքին քաղաքական ցանկացած պատեհ առիթ՝ փորձեր են ձեռնարկելու վարչակարգի տապալման համար: Այս հիմնախնդիրը լուծելու և իր թիկունքն ապահովելու համար Հաֆեզ ալ-Ասադը ստեղծեց պետական կառավարման երկակի համակարգ, որի արտաքին ձևական կողմը պետական կառավարման համակարգի ժողովրդավարական ինստիտուտներն էին, մյուսը՝ վարչակարգի պահպանման իրական և գործուն երաշխիքները, պետության անվտանգության նոր հայեցակարգի անբաժան մասնիկները՝ այսպես կոչված գաղափարական բանակն ու քազմաստիճան հզոր անվտանգության և հստակ ծառայությունների համակարգը՝ մոխաբարաքը, որտեղ գրեթե բոլոր կարևոր բարձր պաշտոնները զբաղեցնում էին կամ այլափոխելով կամ Ասադի հավատարիմ ընկերներն ու բարեկամները: Երկրի նախագահ ընտրվելուց հետո Ասադը մեծ ուշադրության էր դարձնում բանակաշինության գործընթացին, բանակում տիրող բարոյա-հոգեբանական վիճակին, այն ժամանակակից զենքով և զինամթերքով ապահովելու խնդրին՝ նոր իշխանության զլխավոր նպատակներից մեկը համարելով Սիրիայի հիմնական ախոյան Իսրայելի հետ ռազմաստրատեգիական հավասարակշռությունն ապահովելու անհրաժեշտությունը: Չախբասականներից ժառանգություն մնացած քաղաքականացված բանակի փոխարեն, Ասադը առաջ էր քաշում գաղափարական բանակ «ալ-ջայշ ալ-սկախիդի» ունենալու կարգախոսը: Գիշտ է, գաղափարական բանակ կարգախոսը ամբողջովին Ասադի նորամուծությունը չէր և այն հռչակվել էր դեռևս Բասաի հեղափոխությունից հետո, սակայն ձախբասականների օրոք բանակն այն աստիճան էր քաղաքականացվել, որ գրեթե մասնավել էր կուսակցության՝ կուսակցության մեջ: Նախկին դեկավարության օրոք բանակի զլխավոր դերը փորձում էին կատարել տարբեր զինված խմբավորումներն ու կազմակերպությունները, որոնց դեկավարներն ու հրամանատարները չէին ենթարկվում երկրի պաշտպանության նախարարին և զինված ուժերի հրամանատարական կազմին: Նաև այս իրողությունների հետևանքն էր 1967թ. պատերազմում Սիրիայի պարտության պատճառը, իսկ 1966թ. պաշտպանության նախարար դարձած Ասադն անկարող էր կարճ ժամանակամիջոցում արմատական բարեփոխումներ իրականացնել՝ երկրի քաղաքական



ղեկավարության հետ լուրջ տարածայնություններ ունենալու պայմաններում: Գաղափարական բանակը պետք է տոգորված լիներ Բաաս կուսակցության գաղափարախոսությամբ, պաշտպաներ երկրում նրա գործունեության միջոցով արձանագրած ձեռքբերումները՝ հանդիսանալով նոր վարչակարգի և կուսակցության ամուր հենարան: Միրիայում բացի երկրի ազգային անկախության և տարածքային ամբողջականության պահպանման գործառույթներից, բանակի վրա օրենսդրորեն դրված են նաև քաղաքական խնդիրներ, de jure բաասական հեղափոխության սկզբունքների և նպատակների՝ միասնության, ազատության, սոցիալիզմի պաշտպանությունը, de facto Ասադի վարչակարգի պահպանումը: Ասադի օրոք սիրիական բանակը հասավ մի մակարդակի, որը Միրիան իր պատմության մեջ երբեք չէր տեսել, և դարձավ Մերձավոր Արևելքի ամենահզոր և մարտունակ բանակներից մեկը:

Բացի բանակից պետության անվտանգության հայեցակարգում առանցքային նշանակություն էր վերագրված նաև Միրիայի անվտանգության և հատուկ ծառայությունների բազմաստիճան համակարգին, որը վերջնական ձևավորվեց 1970-ական թթ. կեսերին և որը նույնպես վարչակարգի պահպանման կարևոր երաշխիքն էր: Երկրի անվտանգության համակարգի չորս գլխավոր հետախուզությունների ղեկավարները նույնպես արվալի էին: Անվտանգության համակարգում զգալի տեղ էր զբաղեցրել նաև քաղաքական անվտանգության վարչությունը (իդարաթ ալ-ամն աս-սիյասի): Այն պատասխանատու էր վարչակարգի շահերին հակասող կազմակերպված քաղաքական ակտիվության երևույթների բացահայտման և կանխարգելման, քաղաքական այլախոհների բացահայտման և վնասագերծման, երկրում բնակվող արտասահմանցիների և տեղացիների հետ նրանց բազմաբնույթ կապերի և շփումների վերահսկման համար:

Շրրորդ ենթաբաժնում ուսումնասիրվում է Միրիայում Ազգային առաջադիմական ճակատի հիմնադրումը, նրա ստեղծման նախադրյալները, ձևավորման գործընթացը, կազմը, կառուցվածքը, նպատակները, ինչպես նաև վերլուծվում են ճակատի հիմնական փաստաթղթերի՝ խարտիայի և կանոնադրության կարևոր հոդվածներն ու դրույթները: Միրիայի առաջադիմական ուժեր՝ համարվող կազմակերպությունները՝ Արաբական սոցիալիստական Միությունը, Միրիայի կոմունիստական կուսակցությունը, Սոցիալիստ յունիոնիստների կազմակերպությունը, Արաբ սոցիալիստների շարժումը, Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության գլխավորությամբ 1972թ. մարտի 7-ին պաշտոնապես հայտարարեցին Միրիայի Ազգային առաջադիմական ճակատի ստեղծման մասին: Ուղղիչ շարժումից հետո առաջադիմական ուժերի համագործակցությունը Բաասի հետ, նրանց համաձայնությունը կուսակցության ընդհանուր ռազմավարությանը, որն ամրագրված էր ուղղիչ շարժման ծրագրում և կուսակցության երկրամասային 5-րդ և

համազգային 11-րդ համագումարներում, այդ ուժերի աջակցությունը Ասադի քաղաքականությանը բարենպաստ պայմաններ ստեղծեցին ճակատի ձևավորման համար:

Մարտի 9-ին հրապարակվեցին ճակատի հիմնական փաստաթղթերը՝ խարտիան և կանոնադրությունը: Խարտիայում նշվում էր Բաասի և ԱԱԾ-ի գաղափարական ուղղվածության, քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում նախատեսվող ծրագրերի, ինչպես նաև համարաբական խնդիրների մասին: Անհրաժեշտ է նաև նշել, որ խարտիայով որոշ չափով սահմանափակվում էին ճակատի մեջ ներգրավված ոչ բաասական ուժերի գործունեության շրջանակները, որոնք պարտավորվում էին ճակատից դուրս չստեղծել որևէ խմբավորումներ և չվարել կուսակցական-գաղափարական և քաղաքական գործունեություն ոչ երիտասարդության, ոչ բանակային շրջաններում, ինչպես նաև դադարեցնել ուսանողների անդամագրումը իրենց կազմակերպություններում: Առաջադիմական ճակատի կանոնադրության 5-րդ հոդվածը սահմանում էր, որ «ճակատի մասնակիցները իրականացնում են ընդհանուր քաղաքական գործունեություն ճակատի շրջանակներում: Դեպքում իրավունք ունի հրատարակել իր թերթը, շրջաբերականներ և այլ տպագիր հրատարակություններ: Դեպքում մասնակիցներն օգտվում են իրենց կազմակերպությունների շրջանակներում ազատ գործելու իրավունքից», սակայն 4-րդ հոդվածը սահմանում էր, որ «Միրիայի Արաբական Հանրապետությունում պաշտոնական որոշումներ են համարվում ԱԱԾ-ի և Բաասի որոշումները»: Փաստորեն, ճանաչելով Միրիայում մի քանի քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գոյությունը, ԱԱԾ-ի կանոնադրությունը սահմանափակում էր նրանց ինքնուրույն գործունեության իրավունքը: Այդուհանդերձ, Ազգային առաջադիմական ճակատի ստեղծումը կարևոր քայլ էր երկրի միասնության և ներքին տարածայնությունների հաղթահարման ճանապարհին: ԱԱԾ-ի ստեղծումը համարվում է ուղղիչ շարժման կարևորագույն ձեռքբերումներից մեկը, ինչպես նաև Միրիայի քաղաքական համակարգի զարգացման և ներքին միասնության ամրապնդման արտահայտություն: Դեպքում մեջ ներգրավված կուսակցությունները լուրջ քաղաքական կազմակերպություններ էին, որոնցից մի քանիսը ստեղծվել էին մինչև Բաասի կազմավորումը և ունեին երկար պայքարի պատմություն, հստակ գաղափարախոսություն և բազմաթիվ հետևորդներ ու գործուն ազդեցություն Միրիայի քաղաքական թատերաբեմում: ԱԱԾ-ի ստեղծումը նաև որոշ չափով առաջընթաց քայլ էր սիրիական իրականության մեջ ժողովրդավարության զարգացման և դեմոկրատական ինստիտուտների կայացման ճանապարհին:

Չորրորդ ենթաբաժնի նվիրված է Միրիայի նոր մշտական սահմանադրության ընդունմանն ու պետության օրենսդիր մարմնի՝ Ժողովրդական ժողովի ընտրություններին: 1973թ. մարտի 12-ին կայացած համընդհանուր հանրաքվեում ժողովուրդն ըստ պաշտոնական տվյալների 95,6 %-ով կողմ արտահայտվեց Միրիայի նոր

սահմանադրությանը: Այնուամենայնիվ այդ ընթացքում երկրում շարունակում էին սահմանադրական նախագծին ընդդիմադիր ուժերի ելույթներն ու բողոքի ակցիաները, որոնք հատկապես ուժեղ էին Համա քաղաքում: Դժգոհության հիմնական պատճառն այն էր, որ սահմանադրության նախագծի մեջ չկար որևէ հիշատակում, որ «փխլամը Սիրիայի պետական կրոնն է»: Հաֆեզ ալ-Ասադը հարկադրված էր որպես փոխգիշում սահմանադրության մեջ մտցնել մի հոդված, ըստ որի «Հանրապետության նախագահի կրոնը իսլամն է»: Ենթաբաժնում կատարվում է նաև սահմանադրության ներքին և տնտեսական քաղաքականությանը վերաբերող կարևորագույն հոդվածների վերլուծություն:

Ազգային առաջադիմական ճակատի ձևավորումից հետո Սիրիայի առջև կանգնել էր ուղղակի ընտրությունների միջոցով կազմավորվող Ժողովրդական ժողով՝ խորհրդարան ունենալու խնդիրը, որը պետք է փոխարիներ ուղղիչ շարժումից հետո նշանակված ժամանակավոր Ժողովրդական ժողովին: Չախբասականների կառավարման ժամանակաշրջանում Սիրիայում գոյություն ուներ կուսակցական անհանդուրժողականություն, հալածանքներ, կուսակցությունների միջև պայքար քաղաքական և իրավական դաշտից դուրս, արդյունքում ներքաղաքական լարվածություն և անկայուն իրավիճակ: Վերոնշյալ բացասական երևույթներից շատերը վերացան Ասադի կողմից իշխանության գալուց հետո, ինչը էապես փոխեց իրավիճակը և բարենպաստ պայմաններ ստեղծեց երկար ընդմիջումից հետո Սիրիայում օրենսդիր մարմնի ձևավորման համար: 1973թ. մայիսի 25-ին, վերջին տասնմեկ տարում առաջին անգամ Սիրիայում տեղի ունեցան Ժողովրդական ժողովի ընտրություններ, որոնց արդյունքում չորս տարի ժամկետով ընտրվեց Սիրիայի օրենսդիր մարմինը, որի կազմի մեջ մտավ 186 պատգամավոր: Առաջադիմական ճակատը հաղթանակ տարավ՝ ընտրություններին մասնակցելով միասնական ցուցակով: Երկրի օրենսդիր մարմնում ներկայացված էին առաջադիմական ճակատի բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Խորհրդարանի կազմի մեջ մտան նաև գյուղական և աշխատավորական խավի ներկայացուցիչներ, ինչը պետական կառավարման և օրենսդիր իշխանության մեջ ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտության վերաբերյալ Ասադի քաղաքականության արտահայտությունն էր:

Հինգերորդ ենթաբաժինը նվիրված է 1973թ. հոկտեմբերյան արաբա-իսրայելյան պատերազմին և արաբական միասնության խնդրին ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո: Հոկտեմբերյան պատերազմը նախորդ արաբա-իսրայելյան պատերազմների համեմատությամբ առավել ցայտուն կերպով ցույց տվեց արաբական աշխարհի միասնականությունը ոչ միայն ռազմական ասպարեզում, այլև քաղաքական և տնտեսական միջոցների կիրառման մեջ՝ ընդհանուր շահերին և նպատակներին հասնելու համար: 1973թ.-ի պատերազմը ցուցադրեց նաև, թե ինչքան կարող են խորանալ տարածայնությունները

արևմտյան դաշնակիցների շրջանում, մասնավորապես այն պատճառով, որ արաբական երկրները կիրառեցին նավթային զենքը Իսրայելին աջակցող պետությունների դեմ: 1974թ. մայիսի 31-ին Ժնևում ստորագրվեց Իսրայելի և Սիրիայի միջև գործերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիր, որին համապատասխան Իսրայելյան զորքերը դուրս բերվեցին ոչ միայն 1973թ. գրաված սիրիական հողերից, այլև 1967թ. գրավված Գոլանի բարձունքների մի մասից, ինչպես նաև նրա վարչական կենտրոն ալ-Կունեյտայից: Նախագահ Հաֆեզ ալ-Ասադն անձամբ բարձրացրեց Սիրիայի պետական դրոշը Գոլանի բարձունքների ազատագրված վարչական կենտրոն ալ-Կունեյտայում: Իսրայելի կողմից ազատված սիրիական հողերի տարածքը կազմում էր 663 կմ քառ., այդ թվում 1967թ. գրավված 112 կմ.քառ.: Բացի դրանից Իսրայելը ստիպված էր հրաժարվել Հերմոն լեռի վրա գտնվող իր դիրքերից, որի հետևանքով Դամասկոսը իսրայելյան մոտակա հրետանային մարտկոցից հեռացվեց մինչև 65կմ:

Մշտական ռազմական դրությունը, արտաքին հարձակման վտանգը միշտ օժանդակում էին սիրիական ժողովրդի միասնությանը՝ ձևավորելով հասարակական հոգեբանությունը, բարձրացնելով հայրենասիրության զգացումը, սակայն սիրիացիների բարձրագույն աստիճանի համախմբվածությունն ու հաղթանակի հասնելու համար ջանքերի միավորումը, որը տեղի ունեցավ հոկտեմբերյան պատերազմի ընթացքում, աննախադեպ էր: Հոկտեմբերյան պատերազմից հետո Սիրիայում էլ ավելի աճեց Հաֆեզ ալ-Ասադի և Բասս կուսակցության հեղինակությունը:

Ատենախոսության ԵՐԲՐԲԳ ԳԼՈՒԽԵԸ՝ «ՄԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԱԿԱՆՈՒԿԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 1970-ԱԿԱՆ ԹԹ.» նվիրված է ուղղիչ շարժման քաղաքականության հիմնական սկզբունքներին և ուղղություններին սոցիալ-տնտեսական ոլորտում, տնտեսական բարեփոխումների գործընթացին, ինչպես նաև ներքաղաքական զարգացումներին և, գլխավորապես, մահմեդական ընդդիմության հակասահմանադրական գործողություններին ու ոտնձգություններին իշխանության նկատմամբ՝ որպես լուրջ սպառնալիք ուղղիչ շարժմանը:

Գլխի առաջին ենթաբաժնում ուսումնասիրվում է ուղղիչ շարժման սոցիալ-տնտեսական նոր քաղաքականությունը, տնտեսության մեջ մասնավոր հատվածի ստեղծման ու մասնավոր, այդ թվում օտար ներդրումների ներգրավման, ինչպես նաև ազատ ձեռներեցության խրախուսման գործընթացը: Ստանձնելով երկրի ղեկավարությունը՝ Ասադն իրականացրեց տնտեսության ազատականացմանն ուղղված ծրագրեր: Մասնավոր սեկտորը նախատեսված էր խթանել հատկապես գյուղատնտեսության, թեթև և սննդի արդյունաբերության, ինչպես նաև ծառայությունների, սպասարկման և առևտրի ոլորտներում: Հաֆեզ ալ-Ասադն առաջին հերթին մտադիր էր հետ բերել նախորդ վարչակարգի կառավարման տարիներին Սիրիայից արտասահման հոսած մասնավոր

կապիտալը և ակտիվորեն օգտագործել այն երկրի տնտեսական խնդիրները լուծելու համար: 1970թ. նոյեմբերին ընդունված կառավարության որոշմամբ հնարավորություն էր ընձեռնվում Սիրիայի և արտասահմանցի քաղաքացիներին տալադրամով հաշիվներ բացել սիրիական բանկերում, եթե այդ միջոցները գոյացել էին երկրի սահմաններից դուրս իրականացվող գործունեության հետևանքով: 1971թ. հունվարին համաձայնագրով ենթարկվեցին Սիրիայի այն քաղաքացիները, որոնք կատարել էին կապիտալի ապօրինի արտահանման գործողություններ և այլ տնտեսական հանցագործություններ մինչև 1970թ.: Կապիտալ միջոցներն արտահոսել էին հիմնականում 1964-1965թթ. իրականացված համատարած ազգայնացման քաղաքականության հետևանքով և պահվում էին արևմտյան բանկերում: Չգալի մեղմվեցին անհատների վրա դրված արգելքները արտաքին առևտրի ոլորտում, սիրիացի առևտրականներին և գործարարներին թույլատրվեց հումք, արդյունաբերական և գյուղատնտեսական սարքավորումներ ներմուծել արտասահմանից: Սիրիայում արագ տեմպերով զարգանում էր նաև ծառայությունների և սպասարկման ոլորտը: 1971թ. Միլիան միացավ ներդրումների պահովագրման արաբական կազմակերպությանը և վավերացրեց միջարաբական ներդրումների օժանդակման ու նրանց պաշտպանության համաձայնագիրը:

**Երկրորդ ենթաբաժնում** ներկայացվում է ներքաղաքական լարվածությունը Սիրիայում և «Մուսուլման-եղբայրներ» կազմակերպության հակապետական գործունեությունը, որն ուղղակիորեն սպառնում էր ուղղիչ շարժմանն ու նրա հիմնական ձեռքբերումներին՝ պետական կառավարման համակարգին, Ասադի իշխանությանը և ընդհանրապես երկրում նախազահի ինստիտուտին:

1970-ական թթ. վերջերից օգտվելով առկա սոցիալ-տնտեսական որոշ դժվարություններից, չարաշահումներից, կաշառակերությունից և այլ բացասական երևույթներից՝ Սիրիայում գլուխ էին բարձրացրել կրոնական-ծայրահեղական կազմակերպությունները, մասնավորապես մուսուլման-եղբայրները, որոնք իրենց պայքարի հիմնական միջոցն ընտրել էին ահաբեկչությունը: Նրանք գտնում էին, որ ալավիական փոքրամասնությունը զավթել է իշխանությունը և իշխում է սուննի մեծամասնության վրա, չնայած այն փաստին, որ օրինակ 1963-1978թթ. ընթացքում կուսակցության ամբողջ երկրամասային ղեկավարությունում սուննիները զբաղեցնում էին պատասխանատու պաշտոնների 58,2 տոկոսը, ալավիները՝ 20 տոկոսը, դրուզները՝ 10,6 տոկոսը, քրիստոնյաները՝ 4,7 տոկոսը: Սիրիայում մուսուլման-եղբայրների հիմնական քաղաքական նպատակը Ասադի վարչակարգի տապալումն էր և իսլամական պետության ստեղծումը: Նրանք դեմ էին 1970թ-ից ի վեր երկրում ստեղծված բոլոր պետական և հասարակական-քաղաքական ինստիտուտներին: Մուսուլման-եղբայրները գտնում էին, որ իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումները հակասում են իսլամի ավանդույթներին և սկզբունքներին: Ահաբեկիչները երկրում տարածել էին անվստահության, վախի և

բշտամանքի մթնոլորտ, տեղի էին ունենում պետական պաշտոնյաների, հասարակական-քաղաքական, ինչպես նաև իշխանության կողմնակից հայտնի կրոնական գործիչների սպանություններ, պետական հաստատություններում, ռազմական ուսումնարաններում, դպրոցներում տեղի էին ունենում պայքարներ: 1980թ. հունիսին մույնիսկ մահափորձ կատարվեց Հաֆեզ ալ-Ասադի դեմ: 1982թ. փետրվարի 3-ին Համայուն բռնկվեց իր մասշտաբներով ամենախղեպ խռովություն: Կազմակերպության զինյալները գազանաբար հաշվեհարդար տեսան քաղաքի ղեկավարության, Բասա կուսակցության անդամների և նրանց ընտանիքների հետ և թալանկեցին պետական հաստատություններն ու խանութները: Ամբողջ քաղաքը փաստորեն գտնվում էր մուսուլման-եղբայրների ձեռքում: Չունենալով իրադրությունը կարգավորելու այլ լծակներ՝ պետությունը զինված ուժերի և հաստակ ծառայությունների միջոցով խիստ միջոցառումներով ճնշեց խռովությունը՝ վերջ դնելով կրոնական ծայրահեղական կազմակերպությունների գործունեությանը:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ խոսվում է ուղղիչ շարժման էության, նրա հիմնական նվաճումների մասին, արվում են աշխատանքից բխող ընդհանրացումներ և եզրակացություններ: 1. Ուղղիչ շարժման առաջին փուլը, որն ընդգրկում է 1970-ական թթ.-ը, Սիրիայում իրականացված հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների առումով ամենակարևորն ու արդյունավետն էր, ինչի շնորհիվ Սիրիան դուրս եկավ մայրող տարիների խորը համակարգային ճգնաժամից: 2. Թեև ուղղիչ շարժման սկզբնական ծրագիրն առաջին հայացքից բվում էր կուսակցական գաղափարական ավանդական կարգախոսների հավաքածու, սակայն Հաֆեզ ալ-Ասադի դրանց քայլ առ քայլ իրագործման շնորհիվ երկիրը որակապես նոր փուլ թևակոխեց՝ համեմատաբար զարգացած տնտեսական և քաղաքական համակարգով: 3. Ասադի օրոք Սիրիայում առաջին անգամ տեղի ունեցավ համաժողովրդական նախագահական հանրապետություն, Սիրիայում ձևավորվեց պետական կառավարման նոր և գործուն համակարգ, ընդունվեց պետության նոր մշտական սահմանադրություն: 4. Ուղղիչ շարժման և Ասադի քաղաքականության արդյունքում Բասա կուսակցության գաղափարախոսությունն էլ ավելի ամրապնդվեց երկրում և արմատավորվեց ամբողջ հասարակության մեջ: 5. Ուղղիչ շարժման ամենագլխավոր ձեռքբերումը անասան ներքաղաքական կայունության հաստատումն էր, որն աննախադեպ ձեռքբերում էր անկախությունից ի վեր Սիրիայի պատմության մեջ: Այն հնարավորություն ընձեռեց իրականացնել տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, եակնորեն բարելավվեց բնակչության կենսամակարդակը և չնայած որոշ բացասական երևույթների՝ Սիրիայում առաջացավ ու ամրապնդվեց միջին խավը, որի վրա էլ մեծամասամբ հենվում էին իշխանությունները: 6. Ներքաղաքական կայունությունն ու երկրի տնտեսության զարգացումը անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին նաև պետության համար բարենպաստ արտաքին քաղաքականություն վարելու համար: Ասադի ճկուն քաղաքականության շնորհիվ 1973թ.

ազատագրական պատերազմից հետո տարվող բանակցությունների և ստորագրված համաձայնագրի արդյունքում Սիրիային հաջողվեց ազատագրել Գոլանի բարձունքների վարչական կենտրոն ալ-Կունեյտրան: 7. Հաֆեզ ալ-Ասադը Սիրիան վերածեց տարածաշրջանային հզոր ուժի, որի հետ սկսեցին իրապես հաշվի նստել թե՛ Արևմուտքում, թե՛ Արևելքում և թե՛ արաբական աշխարհում: 8. Չեզոքացնելով մուսուլման-եղբայրների հակապետական ընդվզումներն ու ահաբեկչական գործողությունները, որոնք ուղղակիորեն սպառնում էին ուղղիչ շարժման քաղաքականությանն ու նրա հիմնական ուղղություններին, Ասադը վճռականորեն կանխեց աշխարհիկ պետության փլուզումն ու հետընթացը:

#### ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սիրիայում ուղղիչ շարժման առաջացման որոշ պատճառների շուրջ, Երիտասարդ արևելագետների XII հանրապետական գիտական մատաչրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 29-30:
2. Ուղղիչ շարժումը և ազգային առաջադիմական ճակատի ձևավորումը Սիրիայում, Երիտասարդ արևելագետների XIII հանրապետական գիտական մատաչրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, էջ 36-38:
3. Ուղղիչ շարժումը և ազգային առաջադիմական ճակատի ձևավորումը Սիրիայում, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, (հոդվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 96-103:
4. Սիրիայում ուղղիչ շարժման հայեցակարգային որոշ խնդիրների շուրջ, Երիտասարդ արևելագետների XIV հանրապետական գիտական մատաչրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003, էջ 33-36:
5. Սիրիա և Իրան. ռազմավարական գործընկերության ձևավորումը 1979-1980թթ., Հայաստանից, թիվ 6 (60) հունիս, 2003, էջ 56-59:
6. Ուղղիչ շարժման սոցիալ-տնտեսական քաղաքականության նոր մոտեցումների շուրջ, Երիտասարդ արևելագետների XV հանրապետական գիտական մատաչրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2004, էջ 30-33:
7. Սիրիայում Ուղղիչ շարժման սկզբնավորման արտաքին քաղաքական դրդապատճառները, Orientalia, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի երիտասարդ դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, Պրակ 2, Երևան, 2004, էջ 65-77:

#### ГАРИБДЖАНЫН ГЕВОРГ БАГРАТОВИЧ

#### ХАФЕЗ АЛЬ - АСАД И ИСПРАВИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ В СИРИИ

(1970 - е годы)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всеобщая история"

Защита состоится 9- го сентября, 2004 г. по адресу: 375019, г. Ереван, просп. Маршала Баграмяна 24г, Институт Востоковедения НАН РА

#### РЕЗЮМЕ

Представленная работа посвящена изучению возникновения, главных причин, основных целей и принципов одного из важнейших событий в истории современной Сирии - Исправительного движения, которое связано с именем одного из выдающихся лидеров Ближнего Востока, бессменного руководителя Сирии в 1970 - 2000 гг. - Хафеза аль - Асада.

Исправительное движение — это, по сути, возврат к начальной идеологии и основным принципам Арабской социалистической партии возрождения (Баас) во внутривластической, социально - экономической и внешнеполитической сферах, от которых, фактически, отклонилось ее левое крыло в годы своего правления в 1966 - 1970 гг.

Возникновение Исправительного движения было связано с рядом внутренних и внешних причин, среди которых можно отметить глубокие социальные и политические противоречия в сирийском обществе, а также региональные изменения.

В рамках провозглашенного Исправительного движения в стране осуществились ряд реформ и коренных преобразований как в социально - экономической, так и внутри и внешнеполитической, областях. Изучение сути Исправительного движения и политики Асада дает возможность выявить особенности и специфику внутривластических и социально - экономических преобразований в Сирии, правильно понять и оценить глубинные причины разных явлений и событий.

Целью работы является выявление основных причин возникновения движения, среди которых выделяются социально - экономические, партийно - идеологические и внешнеполитические причины, представление политических взглядов и идей Асада, реформы государственной системы, а также новых подходов в социально - экономической и внутривластической сферах.

Научной новизной работы является то, что тема диссертации не являлась предметом специального исследования, хотя ее отдельные аспекты освещались как армянскими востоковедами, так и советскими, российскими и другими

зарубежными специалистами, однако, как правило, в свете как арабо-израильского противостояния, так и общих проблем, в основном политических и экономических процессов Ближневосточного региона.

В I главе диссертации - ("Возникновение исправительного движения, сущность и программные положения") - выявляются причины провозглашения движения, смена власти, программа нового руководства и провозглашение новой политики.

II глава диссертации - ("Исправительное движение и образование новой системы государственного управления в Сирии") - посвящена формированию новых политических институтов - института всенародно избираемого президента страны, Прогрессивного национального фронта, Народного собрания (парламент), а также принятию новой постоянной конституции страны, укреплению вооруженных сил и органов безопасности.

В III главе диссертации - ("Социально-экономические и внутривнутриполитические процессы в Сирии в 1970-е гг.") - анализируются новая социально-экономическая политика режима, относительная либерализация и основные направления экономики страны, а также внутривнутриполитические тенденции развития САР и антигосударственная деятельность организации "Братья - мусульмане", направленная против конституционного строя Сирии и политики Исправительного движения, подавленная властями.

На основании проведенного исследования в Заключение диссертации сделаны выводы по основным рассмотренным в работе вопросам, важнейшие завоевания Исправительного движения, показано их значение для развития современной Сирии.

Работа может представлять интерес для дальнейшего изучения преобразований в Сирии, а также может быть использована при составлении лекционных курсов по разным аспектам истории Сирии. Положения и выводы диссертации могут быть использованы различными государственными органами Республики Армения при составлении аналитических материалов и при определении политики в отношении Сирии.

GEVORG B. GHARIBJANYAN  
HAFIZ AL-ASSAD AND THE CORRECTIVE  
MOVEMENT IN SYRIA  
(1970's)

